ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2001 թվականի ապրիլի 18-ին

ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 20. ~~**Պետական հրդեհային հսկողությունը**~~

~~Պետական հրդեհային հսկողությունն իրականացնում են տեսչական մարմնի պաշտոնատար անձինք՝ հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարման և դրանց խախտումների կանխման համար:~~

~~***(պարբերությունն ուժը կորցրել է 09.07.20 ՀՕ-370-Ն)***~~

~~Տեսչական մարմնի պաշտոնատար անձինք պետական հրդեհային հսկողություն իրականացնելիս իրավունք ունեն՝~~

~~ա) կազմակերպել հրդեհային անվտանգության գծով կատարման համար պարտադիր, ինչպես նաև հրդեհատեխնիկական արտադրանքի մշակման, թողարկման և շահագործման կարգը սահմանող նորմատիվ փաստաթղթերի մշակումը՝ ինքնուրույն կամ պետական կառավարման հանրապետական մարմինների հետ համատեղ.~~

~~բ) իրականացնել պետական հրդեհային հսկողություն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, ինչպես նաև պաշտոնատար անձանց և քաղաքացիների կողմից հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարման նկատմամբ.~~

~~գ) առաջարկություններ ներկայացնել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ՝ հրդեհային անվտանգության միջոցառումների անցկացման վերաբերյալ.~~

~~դ) հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարման և խախտումների կանխարգելման ուղղությամբ հսկողություն իրականացնելու նպատակով օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացնել տարածքների, շենքերի, կառույցների, շինությունների և այլ օբյեկտների հետազոտություններ ու ստուգումներ.~~

~~ե) մասնակցել շինարարության համար հրապարակների (ճանապարհների) ընտրության, ինչպես նաև ավարտված շինարարության (վերակառուցված) օբյեկտների շահագործումն ընդունող հանձնաժողովների աշխատանքներին.~~

~~զ) հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների բացակայության դեպքում հրդեհային անվտանգության պահանջների կատարման ուղղությամբ շենքերի, շինությունների շինարարության,~~

~~վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման համար մշակել և առաջարկել լրացուցիչ հակահրդեհային միջոցառումներ.~~

~~է) հրդեհային անվտանգության պահանջները կատարելու համար կազմակերպությունների ղեկավարներին, պաշտոնատար անձանց և քաղաքացիներին տալ կատարման համար պարտադիր կարգադրագրեր՝ հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների խախտումները վերացնելու, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) հրդեհային անվտանգությունն ապահովելու, ապրանքներն արտադրությունից հանելու, դրանց թողարկումն արգելելու և իրացումը դադարեցնելու մասին.~~

~~ը) ամբողջովին կամ մասնակիորեն դադարեցնել կազմակերպությունների, արտադրական տեղամասերի, առանձին ագրեգատների աշխատանքը, շենքերի, շինությունների շինարարության, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման աշխատանքները, ինչպես նաև շենքերի և շինությունների շահագործումը հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների այն խախտումների դեպքում, որոնք անմիջականորեն և ուղղակի սպառնալիք են ստեղծում հրդեհների առաջացման և (կամ) մարդկանց անվտանգության համար.~~

~~թ) գործող օրենքին համապատասխան վարչական պատասխանատվության ենթարկել քաղաքացիներին և պաշտոնատար անձանց՝ հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների խախտման համար:~~

~~Անտառներում, ստորգետնյա հանքերում, երկաթուղային և օդային տրանսպորտում հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահպանման նկատմամբ պետական հսկողությունն իրականացնում է համապատասխան նախարարությունը, վարչությունը կամ գերատեսչությունը:~~

~~Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության նախարարությունների օբյեկտներում պետական հրդեհային հսկողությունն իրականացնում են համապատասխանաբար այդ նախարարությունները՝ տեսչական մարմնի հետ համաձայնեցված կարգով:~~

~~Դիվանագիտական և հյուպատոսական մարմինների օբյեկտներում պետական հրդեհային հսկողությունն իրականացվում է միայն նշված հիմնարկների պաշտոնական ներկայացուցիչների խնդրանքով և գրավոր թույլտվությամբ:~~

~~Տեսչական մարմնի ղեկավարի ցուցումները և կարգադրությունները պարտադիր են տեսչական մարմնի ստորաբաժանումների պաշտոնատար անձանց համար՝ նրանց կողմից պետական հրդեհային հսկողություն իրականացվելու ժամանակ: Այդ դեպքում այլ պաշտոնատար անձանց միջամտությունը նրանց գործունեությանը չի թույլատրվում:~~

Պետական հրդեհային հսկողությունը և վերահսկողությունը

1. Պետական հրդեհային վերահսկողությունը և հսկողությունն իրականացնում է Տեսչական մարմինը՝ հրդեհային անվտանգության ոլորտին

առնչվող նորմատիվ իրավական ակտերի և փաստաթղթերի, այդ թվում՝ նորմատիվատեխնիկական, պահանջների կատարումն ապահովելու, դրանց խախտումների կանխման կամ բացահայտման, ինչպես նաև հետևանքների վերացման նպատակով:

2. Տեսչական մարմինը՝ պետական կառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, ինչպես նաև պաշտոնատար անձանց և քաղաքացիների կողմից հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի, այդ թվում՝ նորմատիվատեխնիկական, պահանջների կատարման նկատմամբ պետական հրդեհային հսկողություն և վերահսկողություն իրականացնելիս լիազորված է՝

1) առաջարկություններ ներկայացնել պետական կառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ՝ հրդեհային անվտանգության միջոցառումների անցկացման վերաբերյալ.

2) հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի, այդ թվում՝ նորմատիվատեխնիկական, պահանջների կատարման և խախտումների կանխարգելման ուղղությամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնելու նպատակով անցկացնել տարածքների, շենքերի, կառույցների, շինությունների և այլ օբյեկտների հետազոտություններ,ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստուգումներ.

3) մասնակցել շինարարության համար հրապարակների (ճանապարհների) ընտրության (տեղաբաշխման), ինչպես նաև ավարտված շինարարության (վերակառուցված) օբյեկտների շահագործումն ընդունող հանձնաժողովների աշխատանքներին.

4) հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի, այդ թվում՝ նորմատիվատեխնիկական, պահանջների բացակայության դեպքում հրդեհային անվտանգության պահանջների կատարման ուղղությամբ շենքերի, շինությունների շինարարության, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման համար մշակել և առաջարկել լրացուցիչ հակահրդեհային միջոցառումներ.

5) հրդեհային անվտանգության պահանջները կատարելու համար կազմակերպությունների ղեկավարներին, պաշտոնատար անձանց և քաղաքացիներին տալ կատարման համար պարտադիր կարգադրագրեր՝ հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի, այդ թվում՝ նորմատիվատեխնիկական, պահանջների խախտումները վերացնելու, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) հրդեհային

անվտանգությունն ապահովելու, ապրանքներն արտադրությունից հանելու, դրանց թողարկումն արգելելու և իրացումը դադարեցնելու մասին.

6) հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի, այդ թվում՝ նորմատիվատեխնիկական, պահանջների այն խախտումների դեպքում, որոնք անմիջականորեն և ուղղակի սպառնալիք են ստեղծում հրդեհների առաջացման և մարդկանց անվտանգության համար՝

ա. ամբողջովին կամ մասնակիորեն դադարեցնել կազմակերպությունների, արտադրական տեղամասերի, առանձին ագրեգատների աշխատանքը,

բ. ամբողջովին կամ մասնակիորեն դադարեցնել շենքերի, շինությունների շինարարության, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման աշխատանքները,

գ. ամբողջովին կամ մասնակիորեն դադարեցնել շենքերի, շինությունների և այլ օբյեկտերի շահագործումը:

7) սույն հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված լիազորությունների իրականացումն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Տեսչական մարմնի ղեկավարի կողմից ընդունվող վարչական ակտի հիման վրա կապարակնքել (կնքել) առանձին ագրեգատ, շենք, շինություն կամ այլ օբյեկտ:

8) հրդեհային անվտանգության պահանջների խախտման համար՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կիրառել պատասխանատվության միջոցներ:

3. Հրդեհային անվտանգության գծով կատարման համար պարտադիր, ինչպես նաև հրդեհատեխնիկական արտադրանքի մշակման, թողարկման և շահագործման կարգը սահմանող նորմատիվ փաստաթղթերի մշակումն իրականացնում է համապատասխան ոլորտի քաղաքականությունը մշակող պետական կառավարման համակարգի մարմինը.

4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և ազգային անվտանգության ծառայության օբյեկտներում պետական հրդեհային հսկողությունն իրականացնում են համապատասխանաբար այդ մարմինները:

5. Դիվանագիտական և հյուպատոսական մարմինների օբյեկտներում պետական հրդեհային հսկողությունն իրականացվում է նշված հիմնարկների պաշտոնական ներկայացուցիչների կողմից, կամ բացառապես վերջիններիս գրավոր պահանջի հիման վրա՝ Տեսչական մարմնի կողմից:

6. Տեսչական մարմնի կողմից իր լիազորությունների շրջանակներում կայացվող որոշումները, ցուցումները, կարգադրությունները և այլ իրավական ակտերի պահանջները պարտադիր են պետական կառավարման, տրածքային

կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

7. Տեսչական մարմնի ղեկավարի ցուցումները և կարգադրությունները պարտադիր են տեսչական մարմնի ստորաբաժանումների պաշտոնատար անձանց համար՝ նրանց կողմից պետական հրդեհային հսկողություն և վերահսկողություն իրականացվելու ժամանակ: Այդ դեպքում այլ պաշտոնատար անձանց միջամտությունը նրանց գործունեությանը չի թույլատրվում:

«Հոդված 20.1. Տեսչական մարմնի՝ որոշակի գործողություններ կատարելուն պարտադրող կամ որոշակի գործողություններից ձեռնպահ մնալուն հարկադրող վարչական ակտերը և դրանց կատարումը

1. Հրդեհների առաջացման և մարդկանց անվտանգության համար անմիջականորեն և ուղղակի սպառնալիք ստեղծող իրադրությունները վերացնելուն ուղղված, սույն օրենքով սահմանված իր լիազորությունների (գործառույթների) արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով՝ Տեսչական մարմինն իրավասու է կայացնելու որոշակի գործողություններ կատարելուն պարտադրող կամ որոշակի գործողություններից ձեռնպահ մնալուն հարկադրող հետևյալ վարչական ակտերը (այսուհետ՝ սահմանափակող ակտ).

1) որոշում.

2) կարգադրագիր:

2. Սահմանափակող ակտը պետք է պարունակի.

1) Տեսչական մարմնի լրիվ անվանումը.

2) սահմանափակող ակտի հասցեատիրոջ անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը.

3) սահմանափակող ակտի ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը և համարը.

4) սահմանափակող ակտով լուծվող հարցի նկարագրությունը.

5) սահմանափակող ակտի ընդունման իրավական հիմքը.

6) պարտադիր կատարման կամ ձեռնպահ մնալու ենթակա գործողությունների շարադրանքը.

7) սահմանափակող ակտի կատարման ժամկետը.

8) սահմանափակող ակտի գործողության ժամկետը.

9) սահմանափակող ակտն ընդունող պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը և ստորագրությունը (ձեռագիր կամ էլեկտրոնային).

10) սահմանափակող ակտի բողոքարկման ժամկետը և մարմինը, ներառյալ՝ դատարանը, որին կարող է այդ ակտը բողոքարկվել.

11)Տեսչական մարմնի պաշտոնական կնիքը, եթե սահմանափակող ակտը ստորագրվել է ձեռագիր:
3. Սահմանափակող ակտը պարտադիր է դրա հասցեատերերի համար և ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, իսկ սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում այն ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
4. Սահմանափակող ակտը ուժի մեջ մտնելու օրվանից ենթակա է կատարման ոչ ուշ, քան դրանով սահմանված ժամկետում և վերադասության կարգով դրա բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը:
5. Սահմանափակող ակտը ներկայացվում է հարկադիր կատարման դրանում նշված ժամկետում չկատարվելու դեպքում այդ ժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:
6. Սահմանափակող ակտը հարկադիր կատարման ներկայացնելիս Տեսչական մարմինը դրան կից ներկայացնում է այն հասցեատիրոջը հանձնելը կամ այլ կերպ պատշաճ ծանուցելը հավաստող ապացույցը և կատարման վերաբերյալ գրություն, որում նշվում են՝
1) սահմանափակող ակտը հարկադիր կատարման ներկայացնելու տարին, ամիսը և ամսաթիվը.
2) սահմանափակող ակտի հիման վրա կատարման ենթակա գործողությունները կամ այն գործողությունները, որոնց կատարումից սահմանափակող ակտի հասցեատեր անձը պետք է ձեռնպահ մնա.
3) սահմանափակող ակտի ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը և համարը.
4) Սահմանափակող ակտի հասցեատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը (առկայության դեպքում), իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, նրանց բնակության (գտնվելու վայրի) հասցեները, անձի անձնագրային տվյալները կամ հանրային ծառայությունների համարանիշը, իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման կամ պետական հաշվառման համարը:
7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված հարկադիր կատարման վերաբերյալ գրությունը և օրենքով նախատեսված այլ փաստաթղթեր կարող են հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ուղարկվել, և հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից փաստաթղթերը կարող են ստացվել օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային եղանակով:
8. Սահմանափակող ակտը հարկադիր կատարման ներկայացնելը դրա հասցեատիրոջը չի ազատում սահմանափակող ակտի պահանջը չկատարելու համար նախատեսված պատասխանատվությունից:

(20-րդ հոդվածը փոփ. 20.05.05 ՀՕ-108-Ն, փոփ., խմբ. 09.07.20 ՀՕ-370-Ն)